«Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Առարկա՝ անգլերեն

ՈՒսուցիչ՝ Գոհար Սավզյան

Դպրոց՝ «Շահամիր Շահամիրյան» կրթահամալիր

Ղեկավար՝ Անուշ Դանիելյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....3

2. Ուսումնական գործընթացում ընտանիքի և դպրոցի միասնական պահանջմունքների ձևավորումը.....5

3. Դժվար կառավարելի վարք ունեցող սովորողների կրթության կազմակերպման գործընթացը ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունների ձևավորման գործում.....10

4. Ծնողական ժողովների կազմակերպման և անցկացման կարևորությունը....13

5. Եզրակացություն և առաջարկություններ.....15

6. Օգտագործված գրականություն.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Անխոս, ընտանիքը մարդու առաջնային սոցիալականացման սկիզբն է: Հենց ընտանիքում են դրվում երեխայի անհատականության հիմքերը:

Մի շարք հոգեբանների կողմից կատարած ուսումնասիրություններ փաստում են՝ երեխան մինչև երեք տարեկան հասակը կլանում է այնքան տեղեկատվություն, որքան չի ընկալի իր ողջ կյանքի ընթացքում:

Հետևաբար ընտանիքից սկսած, եթե երեխային չբացատրվի ընդունելի վարքագծի դրսևորման անհրաժեշտ ու հիմնական կանոնները, ապա երեք տարեկանում երեխան իր առջև նպատակ կդնի և կփորձի իրականացնել՝ «Ես ինքնուրույն կպարզեմ» գաղափարը: Որպես կանոն, նման դեպքերում երեխան հայտնվում է ոչ ցանկալի միջավայրում, ոչ արժանավայել մարդկանց կողքին, ու այստեղ ոչ թե ծնողն է դառնում երեխային առաջնորդողը, այլ երեխան՝ ծնողին:

Սա համարվում է երեխայի դաստիարակության կարևոր խնդիրներից մեկը, որտեղ մեծ է ծնողի և ուսուցչի դերակատարումը: Իսկ նման խնդիրներին չբախվելու նպատակով պետք է չանտեսել և մեծ ուշադրություն դարձնել ուսուցիչ-ծնող փոխհամագործակցության կարևորման վրա, ինչին միտված է մեր հետազոտությունը:

Համագործակցությունը պետք է հիմնված լինի փոխադարձ աջակցության և օգնության, միմյանց նկատմամբ հարգանքի և հանդուրժողականության վրա: Նման սկզբմունքներին մտված փոխգործակցությունը պետք է ձգտի ու հասնի գործընկերային հարաբերությունների հաստատմանը և ծնողներին դպրոցական կյանքին ներգրավելուն:

Միշտ էլ ուսուցիչների և ծնողների միջև փոխգործակցության բովանդակությունը որոշվում է հասարակության առջև ծառացած՝ երիտասարդ սերնդի կրթության նպատակով և խնդիրներով, հանրային կամ ընտանեկան կրթության առաջնահերթությամբ:

Այնուամենայնիվ, գիտելիք տալու հետ մեկտեղ կարևոր է ծնողներին զարգացնել որպես դաստիարակներ, քանի որ ներկա փուլում փոխազդեցությունը չի սահմանափակվում միայն մանկավարժական կրթությամբ:

Նպատակ՝ Սովորողների կրթական և դաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպումն ապահովելու նպատակով՝ վեր հանել ուսուցիչ-ծնող փոխհամագործակցության կարևորությունը, խնդիրները՝ առաջարկելով լուծման արդյունավետ տարբերակներ:

Խնդիրներ՝

- Ներկայացնել դպրոց-ընտանիք հարաբերությունների պահանջմունքը:
- Առանձնացնել և վերլուծել դժվար կառավարելի վարք ունեցող սովորողների կրթության և դաստարակության խնդիրները ծնող-ուսուցիչ հարաբերությունների համատեքստում:
- Ներկայացնել ծնողական ժողովների ճիշտ կազմակերպումից բխող ուսուցիչ-ծնող հարաբերությունների կարևորությունը:
- Կատարել ուսումնասիրված արդյունքների վերլուծություն՝ ներկայացնելով առաջարկություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ուսուցիչների և ծնողների միջև հաղորդակցությունն ունի իր նուրբ ու կարևոր առանձնահատկությունները: Այս հաղորդակցության մեջ կարևորվում է փոխըմբռնման, վստահություն ձեռք բերելու, հոգևոր և հուզական արժեքների փոխանակման փորձը:

Ընդհանրապես մանկավարժության մեջ ուսուցչի մասնագիտության անբաժանելի, կարևոր և միևնույն ժամանակ դժվար հատվածը ծնողների հետ հարաբերությունների հաստատումն է:

Սովորողներին կրթելու հաջողությունը կախված է ոչ միայն ուսուցչի վերաբերմունքից և պարտականություններից, նրա պատրաստվածությունից, բարոյահոգեբանական առանձնահատկությունից, այլև այն միջավայրի ազդեցությունից, որտեղ ապրում և մեծանում են երեխաները:

18-րդ դարի ֆրանսիացի լուսավորիչները ևս փաստել և կարևորել են սոցիալական միջավայրի դերը: Այսինքն մարդկային շփումների ոլորտը կարևոր դերակատարում ունի անձի՝ հատկապես բարոյական զարգացման և առաջընթացի համար:

Ժամանակների փոփոխության հետ մեկտեղ փոխվել է նաև մարդկային շփման տիրույթը (հատկապես համացանցի առակայության պարագայում), սակայն տեղեկատվության ոչ մի տեխնիկական միջոց, որքան էլ զարգացման արագընթաց ակտիվության հասնի, չի փոխարինի մարդկային անմիջական շփումների կենսունակությանը, ինչն իրականացվում է սոցիալական միջավայրում:

Միջավայրը, որտեղ գտնվում է անձը, ինքնաբերաբար փոխվում է մարդու կյանքի տարբեր փուլերում՝ մանկապարտեզ, դպրոց, մարզական, մշակութային ասպարեզ, ձեռնարկություն, աշխատանքային միջավայր և այլն: Սակայն այս ամենից զատ, սոցիալական միջավայրից անփոփոխ է մնում ասպարեզներից միայն մեկը՝ ընտանիքը:

Ուսուցիչ-սովորող-ծնող ենթահամակարգը բարոյական հարաբերությունների համակարգում կարևորելիս պետք է ելնել այն հանգամանքից, որ ընտանիքը երեխայի

բարոյական դաստիարակության ձևավորման և նրա բարոյահոգեբանական վերաբերմունքն ամրապնդելու կարևորագույն աղբյուրն է:

Ինչպես փաստում են բազմաթիվ հետազոտությունների արդյունքներ, ընտանեկան դաստիարակությունը խորը հետք է թողնում մարդու բարոյական որակների ձևավորման վրա: Ընտանիքն այն առաջնային միջավայրն է, որտեղ երեխան ձեռք է բերում որոշակի կենսափորձ և ծանոթանում հասարակության մեջ գոյություն ունեցող բարոյական նորմերին:

Մանկահասակ երեխան դպրոց գալով՝ արդեն որոշակի պատկերացումներ ունի չարի և բարու, լավի և վատի, գեղեցիկի և տգեղի մասին: Այդ իսկ պատճառով ուսուցանողը պարտավոր է ոչ միայն իմանալ երեխայի մոտ ձևավորված ընկալումների սահմանը, այլև, և ամենակարևորը, ինչ պայմաններում է տեղի ունեցել այդ ձևավորումը:

Ուստի անհրաժեշտ է՝ ուսուցանող-ծնող կապը լինի կենսունակ, և այն նպաստի հիմնական գաղափարի իրականացմանը՝ երեխայի համար կազմակերպել կրթություն ձեռք բերելու անխոչընդոտ ընթացք:

Կարևոր է, որ ուսուցիչների և ծնողների հետաքրքրությունների սահմանը փոխադարձորեն համապարփակ լինի, ընկերական հաղորդակցության կարիքները դառնան բնական, օրգանական և հիմք ծառայեն հարաբերությունների մեջ առողջ մթնոլորտի ձևավորմանը:

Ընդհանրապես ուսուցիչ- ծնող փոխհարաբերությունները կառուցվում են «միջնորդի»՝ աշակերտի միջոցով, ով հայտնվում է երկու տարբեր բևեռների միջև և նպաստում կամ խաթարում է այդ հարաբերությունների ձևավորման ապահովմանը:

Երեխայի դերը, բնականաբար, այս հարցում կարևոր է, սակայն երկու կողմերի ներկայացուցիչները, այսինքն՝ ծնողն ու ուսուցիչը, պետք է չմոռանան, որ իրենք գործ ունեն երեխայի կամ դեռահասի հետ և հարաբերությունները ձևավորելիս հաշվի առնեն այս փաստը, չէ՞ որ լինում են դեպքեր, երբ երեխան իր շահերը պաշտպանելու, կատարած սխալը կոծկելու, ստացած նկատողության կամ բացասական գնահատանիշի հիմնավոր պատճառը չներկայացնելու նպատակով՝ կարող է սուտ ու ոչ արդար տեսանկյունից գնահատանք տալ ուսուցչի վերաբերմունքին և կարող է լինել հակառակը՝ իր բացթողումների պատճառը վերագրել ծնողին:

Ուսուցիչը պետք է դառնա ընտանեկան միջավայրի մի մասը (որպես ծնողին ամենամոտ խորհրդական՝ երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերում), իսկ սովորողի ծնողը պետք է դառնա նրա դպրոցական միջավայրի՝ որպես ընդհանուր մանկավարժական գործընթացի մասնակիցը:

Հարաբերությունների նման ձևավորումը՝ իրական փոխըմբռնման, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, նպաստում է սովորողների բարոյական հարաբերությունների մշակույթի ձևավորմանը:

«Երեխան կյանքի մեջ մտնելուն պես, նորրան մի առաջնորդող է պետք, բայց ոչ կույր առաջնորդող, այլ երեխայական բնությանը քաջահմուտ և զավակասեր մի ծնող, որ հօգուտ յուր մանկան առաքինության՝ զսպի յուր ընտանեկան գայթակղեցուցիչ կիրքերը և բազմակերպ նյութերով զարգացնել երեխայի քնքուշ զգացումը առաքինության մեջ»,- երեխաների դաստիարակության հարցում իր տեսակետն արտահայտել է գրող, մանկավարժ, հրապարակախոս Ղ. Աղայանը [[1]]:

Ընտանիքի և դպրոցի բարոյական հարաբերություններն ուսումնասիրելիս կա ևս մեկ հանգամանք. դպրոցը կամ զարգացնում է երեխայի արդեն իսկ ձեռք բերած բարոյական հատկանիշները, որոնք զարգացել և զարգանում են ընտանիքում, կամ ստիպված է նրան վերադաստիարակել:

Նշված երկու դեպքերում էլ ուսուցիչը պետք է տեղեկացված լինի ընտանիքում տիրող բարոյական իրավիճակի մասին, իսկ ծնողն էլ իր հերթին պետք է հաղորդակից դառնա ուսուցչի մանկավարժական և բարոյական պահանջներին:

Առանց այս փոխադարձ հարաբերությունների ձևավորման անհնար կդառնա իրականացնել երեխաների բարոյական զարգացման մանկավարժական կառավարումը, դժվար կլինի իրագործելի դարձնել կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ընտանիքի և դպրոցի պահանջների միասնության իրագործումը: Չէ՞ որ այն հիմնված է խորը փոխըմբռնման և երեխաների ճակատագրի համար պատասխանատվության վրա:

Մանկավարժական գիտությունը դիտարկում է ընտանիքի դաստիարակչական գործառույթը ծնողների և երեխաների փոխհարաբերությունների, դաստիարակչական նպատակների ու միջոցների, նրանց իրավունքների և պարտականությունների

[1] Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հատոր 4, էջ 60, Երևան 1963թ.

տեսանկյունից: Այն փորձում է ի հայտ բերել ընտանեկան դաստիարակության հնարավորությունները, նրա դաստիարակչական ներուժը, զարգացնել ու կատարելագործել դրանք, բացահայտել բացթողումներն ու գտնել դրանց հաղթահարման ուղիները [2]:

Ծնողների և ուսուցիչների փոխազդեցությունը կարող է հանգեցնել,

- բացահայտել և հաշվի առնել երեխայի շահերն ու կարիքները,
- հարգալից վերաբերմունք, փոխգործակցություն ցուցաբերել յուրաքանչյուր մասնակցի նկատմամբ,
- շահագրգիռ վերաբերմունք և աջակցություն դրսևորել երեխայի ճակատագրի, ընտանեկան խնդիրների, երեխայի և ընտանիքի շահերի պաշտպանության, խնդիրների լուծման հարցում,
- հոգ տանել երեխայի առողջության և առողջ ապրելակերպի մասին,
- ստեղծել փոխադարձ ուշադրության իրավիճակ,
- բացահայտել դժվարությունների և փոխգործակցության խնդիրները,
- իրականացնել վերապատրաստումներ ուսումնառողների և ուսուցանողների, ծնողների՝ միմյանց հետ հաղորդակցության և փոխշահավետ գործունեության ապահովման վերաբերյալ [3]:

Փորձը ցույց է տվել, որ ոչ բոլոր ուսուցիչներին է հաջողվում սովորողների ծնողների հետ հաստատել արդյունավետ հարաբերություններ, չէ՞ որ ծնողների պահանջմունքները կարող են լինել խիստ տարբեր, երբեմն նույնիսկ ոչ արդարացված:

Այս ամենը հաշվի առնելով՝ առաջարկվում է փոխհամագործակցության որոշ կանոններ.

---

[2] Լ. թ. Ասատրյան, Գ. Հ. Հակոբյան, Մ. Ա. Ասատրյան, Մ. Մ. Գևորգյան, Ն. Զ. Կարապետյան, Ա. Ա. Բաղդասարյան, Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, էջ 281, Երևան, 2017

[3] Партнёрские отношения педагогов и родителей в воспитании дошкольников | Материал: | Образовательная социальная сеть (nsportal.ru)

Ծնողներին ակտիվորեն ներգրավել երեխաների հետ կրթական գործընթացում՝ ապավինելով նրանց օգնությանը:

Ծնող- ուսուցիչ հանդիպումների ժամանակ խոսել իրականացվող պլանների, ողջ դասարանի խնդիրների, ոչ մի դեպքում անհատական երեխաների մասին:

Ծնողների հետ շատ մտերմիկ հարաբերություններ չստեղծել: Յուրաքանչյուր ծնողի հետ գտնել ու գծել շփման սահման, որը կարող է մեկը մյուսից խիստ տարբեր լինել:

Իրականում ծնողն էլ կարիք ունի աջակցության, օգնության ու լավ խորհուրդների:

Գծանկար 1. Կանոններ ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունների ձևավորման վերաբերյալ

Չիկագոյի դպրոցների սոցիոլոգիական հետազոտության կենտրոնների ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ ծնողների հետ արդյունավետ կապեր հաստատող դպրոցներում տասն անգամ ավելի հավանական է, որ բարելավումներ կգրանցվեն «մաթեմատիկա» առարկայից և չորս անգամ ավելի հավանական է, որ կբարելավվի սովորողների ընթերցանության որակը: Ուսումնասիրությունը կատարվել է այն դպրոցների համեմատությամբ, որտեղ թույլ է ծնող-դպրոց կապը:

Այսինքն՝ այս հետազոտության արդյունքները փաստում են, որ արդյունավետ կապը կարող է բարձրացնել կրթության որակի ցուցանիշը [4]:

[4] The Importance of Parent-Teacher Relationships (familyengagementlab.org)

ԴԺՎԱՐ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սովորաբար միշտ էլ դժվար է աշխատանքը հատկապես այն ուսուցիչների համար, ովքեր գործ ունեն համեմատաբար ավելի դժվար կառավարելի վարք ունեցող սովորողների հետ: Իրականում այդ դժվարությունն ավելի է մեծանում, երբ առիթ է առաջնում հարաբերություններ հաստատել նման երեխաների ծնողների հետ:

Եթե ծնողը միտում ունի, ձգտում է պաշտպանել և արդարացնել երեխայի՝ ուսուցչի կողմից ներկայացվող անցանկալի վարքագիծը, չի ցանկանում միջամտել նրա դաստիարակությանը, ապա նա երեխային արդարացնելու նպատակով կներկայացնի տարաբնույթ փաստարկներ՝ «մենք զբաղված ենք, ժամանակ չունենք», «ամեն ինչ փորձել ենք, ոչինչ չի ստացվում» և այլն: Ծնողներից հաճախ կարելի է լսել նաև. «դպրոցն է մեղավոր, որ մեր երեխան դարձել է այդքան անկառավարելի», «թող դպրոցը դաստիարակի, ինչու՞ մենք»:

Իսկ եթե ծնողը ցույց է տալիս իր անօգնականությունը, ապա նա կփորձի դիմել ուսուցչի օգնությանը՝ «երեխան մեզ չի լսում, խնդրում եմ, օգնեք իրեն», «մենք շփոթված ենք, չգիտենք՝ ինչ անել, տվեք ձեր խորհուրդը»:

Այս դեպքերում ուսուցիչը պետք է և պարտավոր է ծնողի հետ վարել կառուցողական զրույց, ծնողի հետ միավորվելով՝ փորձի օգնել երեխային:

Իսկ ինչպե՞ս իրականացնել օգնությունը:

Կարևոր է, որ ուսուցիչը չկորցնի իր անկախությունը և տիրապետումը: Նա այնպես պետք է զրույցը վարի, որպեսզի ոչ արդարացումներ փնտրի, եթե իհարկե ամեն ինչ ճիշտ է իրականացրել և ոչ էլ սկսի սպառնալ:

Բարդ կառավարելի վարքագծի շտկման ողջ բեռը ստանձնելը ևս սխալ է, ուղղակի արդյունավետ կլինի միավորվել ծնողների հետ՝ երկուստեք երեխային օգնելու ճանապարհ փնտրելով:

Կարևոր է հետևայլ բնութագրումը՝ հաղորդակցվելու կարողությունը ուսուցչի մասնագիտական որակն է:

Ուսուցիչը պետք է ունենա բարձր հոգեբանական մշակույթ, կարողանա շփվել, զրույց վարել, լսել և հասկանալ զրուցակցին: Եվ այս դեպքում էական չէ, թե կոնկրետ ով է հանդես գալիս որպես զրուցակից՝ սովորողը, թե՞ նրա ծնողը: Ցանկացած իրավիճակում նա պետք է իրեն դրսևորի հոգեբանորեն գրագետ պահվածքով:

Երբեմն ուսուցիչը, ծնողների հետ դեռևս զրույցը չսկսած, սկսում է հանդես գալ ընդդիմադրի կերպարով՝ խոսակցությանը տալով խրատական դասախոսություններ «կարդալու» հրամայական տոն:

Անխոս, ցանկացած իրավիճակում ցանկալի չէ զրույցը վարել այս կերպ: Նման դեպքում որևէ համատեղ գործողությունների մասին խոսք լինել չի կարող. ծնողները սկսում են խղճալ իրենց երեխային և մեղադրել ուսուցչին:

Պետք է փորձել հասկանալ սովորողի ծնողների զգացմունքները, ավելին՝ համատեղ գործողությունների եզրեր փնտրելով:

Ծնողի նկատմամբ դրական վերաբերմունքը կհամարվի առաջին քայլը դեպի համագործակցություն:

Այդ համագործակցությունը խրախուսելու եղանակներից մեկն էլ գործընթացի կարևորության ընդգծումն է: Ամրապնդելով ծնողների վստահությունը՝ նրանք կարող են բարելավել իրենց որդու կամ դստեր կյանքն ու կրթությունը:

Ծնողների հետ կառուցողական երկխոսություն ունենալու համար, ցանկալի է [5].

1. Ոչ մի գնով չձգտել պաշտպանել սեփական դիրքորոշումը:

Հաճախ պատահում է, որ յուրաքանչյուր զրուցակից ձգտում է միայն պաշտպանել սեփական կարծիքը: Եթե ծնողների հետ զրույցը տեղի ունենա նման ձևով, ապա գուցե ուսուցիչը կարողանա համատեղ գործունեություն կազմակերպել, բայց գուցե՝ ոչ: Զրույցը հաջողված կարելի է համարել ոչ թե այն ժամանակ, երբ ուսուցիչը

[5] Учитель и родители: система взаимоотношений | «Образование Ямала» | Ежеквартальный информационно-методический журнал (yamal-obr.ru)

ապացուցում է, որ ինքը ճիշտ է, այլ երբ կարողանում է ծնողներին գրավել երեխայի դաստիարակությանը ակտիվորեն մասնակցելու հարցում:

2. Քննարկեք բուն խնդիրը, ոչ թե սովորողի անձնական որակները:

Ուսուցչի և ծնողների միջև զրույցի դրական արդյունք հնարավոր չէ ունենալ, եթե նրանք սկսեն քննարկել երեխայի բնավորության գծերը և զրույցն ավարտեն միմյանց անձնական հատկանիշների վերաբերյալ «քննարկումով»: Զրույցը կխճճվի փոխադարձ կշտամբանքների, մեղադրանքների, կասկածների մեջ, և կողմերը կբաժանվեն՝ որպես համաձայնություն չգտնող զրուցակիցներ:

Նման դեպքում գուցե և ուսուցիչը վերջնականապես կորցնի ծնողների աջակցությունը:

3. Մի վստահեք գենետիկային:

Ուսուցիչները հաճախ նշում են, որ այս սովորողը կրթության մեջ կունենա հաջողություններ և դպրոցում իրեն պարկեշտ կդրսևորի, քանի որ նրա ծնողները կիրթ են: Մյուսից հաջողություններ ակնկալելը զուր է, քանի որ ծնողների գիտակցական մակարդակը բարձր չէ:

Իհարկե, ժառանգական հատկանիշների և ընտանեկան պայմանների ազդեցությունը երեխայի բնավորության և կարողությունների ձևավորման վրա հսկայական դեր կարող է ունենալ, սակայն այս ազդեցությունն անսահմանափակ չէ: Յուրաքանչյուր ուսուցիչ, ելնելով իր սեփական փորձից, կարող է փաստել դեպքեր, երբ լավ երեխա է դարձել «վատ» ընտանիքում մեծացած երեխան և ընդհակառակը, լավից՝ վատը:

Եթե դպրոցում առաջին դասարանից սովորողին վերաբերվում են որպես «վատ ընտանիքի» երեխայի, ապա նա իսկապես սկսում է անտեսել սովորելու, պարտաճանաչ լինելու փաստը և խախտել սահմանված կարգապահական նորմերը: Եվ հակառակը, հնարավոր է հավասարեցնել «վատ ընտանիքից» երեխայի ակադեմիական առաջադիմությունը և վարքագիծը ուսուցչի կողմից նրա նկատմամբ դրական, ամրապնդող վերաբերմունքով:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական գործընթացը կազմակերպելիս ուսուցիչ-ծնող հանդիպման ամենակիրառվող և տարածված ձևը ծնողական ժողովի կազմակերպումն է:

Սա ծնողների հետ հանդիպման ընդհանուր ձևաչափ է, որը տարբեր ուսումնական հաստատություններ իրականացնում են ուսումնական տարվա ընթացքում տարբեր քանակով ու ընդունելի տարբեր ձևաչափերով:

Ըստ բովանդակության՝ ծնողական ժողովները կարող են լինել [6]՝

- ընթացիկ
- թեմատիկ
- ավարտական

Ընթացիկ ծնողական ժողովները ավանդական օրակարգով նախատեսված հանդիպումներ են, որոնք կարող են ներառել բազմապիսի հարցեր՝ մնացորդային գիտելիքի ամսական կամ եռամսյակային տվյալների հաղորդում, ընթացիկ միջոցառումների և տոների կազմակերպչական հարցերի քննարկում, ուսումնական ծրագրերի հետ կապված՝ նախապատարստական աշխատանքների կատարում և այլն:

Ծնողների և ուսուցիչների թեմատիկ հանդիպումների ընթացքում քննարկվում են արդիական խնդրներ, որով հետաքրքրված է դասարանի ծնողների ճնշող մեծամասնությունը: Թեմատիկ ծնողական ժողովները, որպես կանոն, կրում են ուսուցողական բնույթ և ուղղված են երեխաների դաստիարակության ոլորտում՝ ծնողների գիտելիքների ընդլայնմանը:

---

[6] Учитель и родители: система взаимоотношений | «Образование Ямала» | Ежеквартальный информационно-методический журнал (yamal-obr.ru)

Ավարտական ծնողական ժողովները հանդիպումներ են, որոնց խնդիրն է ամփոփել երեխաների զարգացման արդյունքները որոշակի ժամանակով:

Նման հանդիպման ժամանակ ծնողները հնարավորություն ունեն գնահատելու սեփական երեխայի ձեռքբերումները, համեմատելու ունեցած արդյունքներն արդեն իսկ ձեռքբերածի հետ:

Դասարանական ծնողական ժողովներն անցկացնելիս ցանկալի է.



Գծանկար 1.Ծնողական ծողովներ անցկացնելու կարևոր նկատառումներ

Ինչպիսին էլ որ լինի ծնողական ժողովների բովանդակությունը, այն հատուկ նախապատրաստություն է պահանջում: Դասղեկը պետք է հիշի, որ ծնողական ժողովը արդյունավետ կլինի, երբ ուսուցիչը նախապես պլանավորի այն՝ անպայման գրառելով քննարկվող հարցերի կետերը:

Ընդհանրապես բովանդակալից, ոչ ավանդական ձևաչափով անցկացվող ծնող-հանդիպումները կարող են վերափոխել ծնողների վերաբերմունքն ինչպես դպրոցի, այնպես էլ ուսուցիչների նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ ծնողները դպրոցի սոցիալական հաճախորդներն են, նրանք պետք է և կարող են ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և դպրոցական կյանքի կառավարմանը:

Իմ աշխատանքային փորձը թույլ է տալիս եզրակացնել, որ կան ծնողներ, ովքեր պարզապես անտեսում են դպրոցը, ցանկություն չեն ցուցաբերում այցելել այն ուսումնական հաստատությունը, որն իրականացնում է իրենց երեխաների կրթության և դաստիարակության գործընթացը:

Երբեմն ծնողները գիտակցաբար խուսափում են հատկապես այն ուսուցիչներից, ովքեր ենթադրաբար կփոխանցեն երեխայի մասին՝ իրենց համար անցանկալի տեղեկություններ: Իրականում նման վարքագիծ դրսևորելը սխալ է:

Ծնողը պետք է միշտ կապի մեջ լինի դպրոցի հետ, հետաքրքրվի երեխայի ձեռքբերումների և թերացումների մասին, պարզի բացթողումների պատճառն ու առաջացած հետևանքները:

Նման դեպքերում ծնող-ուսուցիչ միասնական համագործակցությունը տեսնելով՝ երեխան ինքն իր մեջ կփորձի փնտրել անհատականություն, և ինքն էլ կձգտի լավագույնին:

Դպրոցի և ընտանիքի միջև փոխգործակցության էությունն այն է, որ երկու կողմերն էլ պետք է շահագրգռված լինեն երեխային ուսումնասիրելու, նրա լավագույն որակներն ու հատկությունները բացահայտելու և զարգացնելու հարցում: Դա կօգնի ուսուցիչներին և ծնողներին միավորել սեփական ջանքերը երեխայի մեջ այլ որակների և հատկությունների ձևավորման համար, որոնք անհրաժեշտ են նրա ինքնորոշման և ինքնիրացման, դժվարությունների հաղթահարման և ձախողման հարցում:

Ուսումնական գործընթացում ոսուցիչ-ծնող փոխհամագործակցության արդյունավետության համար առաջակում ենք.

- Ցանկալի է, որ ուսուցանողը ծնողներին ցույց տա իր սերը նրանց երեխաների նկատմամբ:

- Ծնողը պետք է զգա, որ ուսուցիչը երեխայի բնավորության մեջ փնտրել ու գտել է դրական հատկանիշներ, համակրում, նույնիսկ սիրում է նրան:
- Երբ ծնողը տեսնում է երեխայի նկատմամբ ուսուցչի բարեկամական վերաբերմունքը, հոգատարությունը, այդ դեպքում ինքնըստինքյան նրա մոտ ավելորդ է դառնում դպրոցից ու ուսուցչից հոգեբանական պաշտպանվածության ձեռքբերում: Նման դեպքում հաջորդ քայլը տանում է դեպի համագործակցության:
- Եթե դպրոցում դեռահասն առանձնանում է վատ վարքի դրսևորմամաբ, այսինքն փորձում է ինքնահաստատվել և իր «քաջությունն» է ցուցադրում դասընկերների առջև, առաջարկեք ծնողներին փնտրել սոցիալապես ընդունելի գործունեության ձևեր, որոնցում իրենց որդին կարող է բավարարել ինքնահաստատման իր կարիքը, օրինակ՝ այցելել հոգեբանի, մարզական կամ մշակութային խմբակների և այլն: Միևնույն ժամանակ շատ կարևոր է՝ ծնողները վստահ զգան, որ խնդրին հնարավոր է լուծում տալ:
- Ծնողների հետ կառուցողական երկխոսություն վարելը, անխոս, կնպաստի և կդնի ուսուցիչ-ծնող հարաբերությունների կարևորագույն հիմնաքարը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանուկյան Ա. Լ. Ընտանեկան դաստիարակությունը հայ էթնոմանկավարժական մշակույթում, Երևան, 2021

2. Լ. թ. Ասատրյան, Գ. Հ. Հակոբյան, Մ. Ա. Ասատրյան, Մ. Մ. Գևորգյան, Ն. Զ. Կարապետյան, Ա. Ա. Բաղդասարյան, Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, էջ 281, Երևան, 2017

3.Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հատոր 4, էջ 60, Երևան 1963թ.

4.Учитель и родители: система взаимоотношений | «Образование Ямала» | Ежеквартальный информационно-методический журнал (yamal-obr.ru)

5.Партнёрские отношения педагогов и родителей в воспитании дошкольников | Материал: | Образовательная социальная сеть (nsportal.ru)

6. The Importance of Parent-Teacher Relationships (familyengagementlab.org)